ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/42

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 20.06.2021թ.),

քննելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար տնտեսական և սանիհիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից 21.06.2021թ. ներկայացված (23.06.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/42 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սովթ պապիրուս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 21.06.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունն իր կարիքների համար տնտեսական և սանիհիգենիկ ձեռքբերման նպատակով 27.05.2021 թվականին

հրապարակել է թիվ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ).

Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերությունը:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 03.06.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել այն պատճառով, որ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում ապրանքի անվանման փոխարեն նշվել է անվանում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ հրավեր է համարվում պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմանները:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասով հաստատված գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 1.2. կետի համաձայն՝ նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակից հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, եթե այն չի համապատասխանում հրավերի պայմաններին, հակառակ դեպքում այն ենթակա է գնահատման որպես բավարար: Հրավերի պայմաններ ասելով օրենսդիրը հստակ տվել է սահմանում, այն մասին, որ հրավերը պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններն են, այսինքն այն բոլոր տեղեկությունները, որոնք հանդիսանում են պայմանագրի էական պայմաններ: Գնման ընթացակարգի շրջանակում

նշված պայմանների ներկայացման նպատակով սահմանվել է նաև որոշակի ձևանմուշներ, և թույլատրվել նաև այդ ձևանմուշներից շեղումներ նպատակահարմարության դեպքում, քանզի դրանք ըստ էության, ոչ թե ապագայում կնքվող պայմանագրի պայմաններ են, այլ այդ պայմանների ներկայացման եղանակ: Եվ դրանք տարբեր եղանակներով ներկայացնելը, այդ թվում տարբեր լեզուներով չի կարող հանդիսանալ սահմանափակում և զրկել մասնակցին գնման ընթացակարգի մասնակցությունից, եթե անհրաժեշտ բոլոր պայմանները լրացված են հստակորեն: Հակառակ դեպքում գործ կունենաք ձևական նկատառումներով հայտի մերժմանը, որը կսահմանափակի մասնակցի իրավունքները: Ավելին օրենսդիրը նույնիսկ նախատես է գնային առաջարկում տեղ գտած որոշակի ձևական սխալների դեպքում հայտը չմերժելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի պարտականություն և բոլոր այդ դեպքերում սահմանված են այնպիսի իրավիճակներ, որ գնային առաջարկը չի կարող մերժվել ձևական սխալների պարագայում, եթե հնարավոր է դրա նույնկանացումը, այսինքն սահմանելով լայն մրցակցության հնարավորություն, բացառել է ձևական նկատառումներով միջամտությունը: Օրինակ եթե գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով, ապա այդ հանգամանքը չի կարող հայտը մերժելու հիմք հանդիսանալ, քանզի այն հնարավոր է նույնականացնել և տարբերակել, ըստ էության ստանալով և փաստելով հրավերերի այնպիսի էական պայմանի վերաբերյալ տեղեկատվություն, որը դառնալու է պայմանագրի էական պայման: Եթե օրենսդիրը նախատեսել է հրավերի պայմանների վերաբերյալ ձևական սխալների պարագայում հայտը մերժելու անհնարինություն, ապա որքանով իրավաչափ կլինի գնային առաջարկի ներկայացման համար նախատեսված ձևաթղթում առկա սխալի պարագայում հայտի մերժումը, այն էլ այն դեպքերում երբ նույն հրավերով նախատեսված է հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող ձևով հայտը ներկայացնելու հնարավորություն՝ ըստ նպատակահարմարության:

Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական

ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Ուստի այն դեպքերում երբ գործ ենք ունենում ոչ թե հրավերի պայմանների, այլ այն լրացնելու ձևանմուշներում առկա ձևական սխալների հետ, որի համար նախատեսված չէ հայտը անբավարար գնահատելու և մերժելու օրենսդրական կարգավորումներ, ապա այն վերլուծելով ընդունող մարմնի կամքի բացահայտման և նույն իրավական ակտի սկզբունքների վերլուծության շրջանակում պետք է փաստել, որ ըստ էության հայտի մերժման արգելք է սահմանված նաև այն բացառիկ դեպքերում, երբ գնային առաջարկը ներկայացված է սխալ և ոչ ամբողջական լրացված, սակայն հնարավոր է ապահովել և կանխորոշել հրավերի պայմանի վերաբերյալ մասնակցի առաջարկը, իսկ դրա լրացման եղանակի տարբերակված մոտեցումը եթե նույնպես հնարավոր է նույնականացնել թե ինչի մասին է խոսքը, ապա չի կարող հայտի մերժման հիմք հանդիսանալ, ավելին եթե նույնիսկ հրավերով է նախատեսված այն այլ ձևով ներկայացնելու հնարավորություն:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ, պետք է արձանագրել հետևյալը, որ «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը պարունակում է հրավերի պահանջներին վերաբերվող բոլոր տեղեկությունները, լրացված է ճիշտ, առկա չեն այնպիսի սխալներ, որոնք կվկայեն սխալ գնային առաջարկի մասին: Իսկ ինչ վերաբերվում է լրացված փաստաթղթի ձևանմուշում առկա, այն վերնագրին, որ «ապրանքի անվանում» գրվել է «անվանում», ապա նախ հայտնեմ, որ այն հրավերի պայման չէ, այլ ձևանմուշին առնչվող խնդիր է, ավելին հնարավոր է հստակորեն նույնականացնել, որ «անվանում» սյունյակի տակ լրացված են ապրանքի անվանումները և այն հանդիսանում է ձևական սխալ, որը հայտը անբավարար գնահատելու և մերժելու հիմք չի կարող հանդիսանալ: Նույն է թե՞ «ապրանքի անվանում» լրացված լիներ մգեցված և/կամ այլ տառատեսակով, կամ առկա լիներ տառասխալ, ապա նույն սկզբունքով նման կերպով ներկայացված հայտը նույնպես մերժման ենթակա կլիներ, որը չեր բխի գնումների մասին օրենսդրության սկզբունքներից և օրենսդրի կամքից, ավելին այն դեպքում, երբ գնային առաջարկի ներկայացման ձևի ընտրության հնարավորություն սահմանվել է սույն գնման ընթացակարգի 2-րդ մասով հաստատված գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 1.2. կետով:

Ուստի ստեղծված իրավիճակը չի բխում գնման ընթացակարգի միասնական կանոններով և ոչ խտրական մոտեցում ցուցաբերելու սկզբունքներից»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Պարտավորեցնել «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղարկելու և փոփոխելու 03.06.2021թ. թիվ 2 արձանագրությամբ «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշումը՝ կայացնելով «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշում:

Ի լրումն վերը շարադրված բողոքի Ընկերությունը 30.06.2021թ. հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի շրջանակում ներկայացված բողոքի պահանջն անհրաժեշտություն է ծագել ճշգրտելու, ուստի նշվածով պայմանավորված խնդրում եմ այն քննության առնել հետևյալ կերպ.

Պարտավորեցնել թիվ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի չեղարկելու և փոփոխելու 03.06.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու մերժելու որոշումը՝ լրացված փաստաթղթի ձևանմուշում առկա վերնագրի «անվանում» բառի մասով, այդ մասով կայացնելով «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու որոշում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.06.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.06.2021թ. թիվ 01/24.1/1517-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021թ. հունիսի 23-ի N /ԲՔԱ-ԳՆ/2/10249-2021 գրության՝ հայտնում եմ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար տնտեսական և սանիհիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով 2021թ. մայիսի 27-ին կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնման ընթացակարգ, որին սահմանված կարգով հայտ են ներկայացրել տասը մասնակիցներ:

Հայտ ներկայացրած մասնակիցներից «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնային գնային առաջարկում (Հավելված N 2) «ապրանքի անվանումը» դաշտում նշված է եղել միայն «անվանում» բառը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը և Ընթացակարգի հրավերի 8.2 կետը, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, մերժել է «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.06.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար տնտեսական և սանիհիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, սահմանվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
…	…			
…	…			

_____ մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրությունը

Կ. Տ.

3. «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չ/Հ	Անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)/ տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով թվերով/
1	Ապակի լվանալու հեղուկ	26750 / քսանվեց հազար յոթ հարյուր հիսուն /	5350 /հինգ հազար երեք հարյուր հիսուն/	32100 /երեսուներկու հազար մեկ հարյուր/
3	Անձեռոցիկ տուփով /քաշովի/	5583.33 / հինգ հազար հինգ հարյուր ութսուներեք դրամ երեսուներեք լումա /	1116.67 /մեկ հազար մեկ հարյուր տասնվեց դրամ վաթսունյոթ լումա/	6700 /վեց հազար յոթ հարյուր/
4	Անձեռոցիկ թաց	2791.67 / երկու հազար յոթ հարյուր իննսունմեկ դրամ վաթսունյոթ լումա/	558.33 /հինգ հարյուր հիսունութ դրամ երեսուներեք լումա/	3350 /երեք հազար երեք հարյուր հիսուն/
11	Ձեռքերը չորացնելու թուղթ	2791.67 / երկու հազար յոթ հարյուր իննսունմեկ դրամ վաթսունյոթ լումա/	900 /ինը հարյուր/	5400 /հինգ հազար չորս հարյուր/
21	Զուգարանի թուղթ /երկշերտ/	66666.67 / վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/	13333.33 / տասներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/	80000 /ութսուն հազար/
31	Հոտազերծիչ	20266.67 /քսան հազար երկու հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/	4053.33 / չորս հազար հիսուներեք դրամ երեսուներեք լումա/	24320 /քսանչորս հազար երեք հարյուր քսան/
32	Մաքրող փոշի /ռախշա/	23833.33 / քսաներեք հազար ութ հարյուր երեսուներեք դրամ	4766.67 /չորս հազար յոթ հարյուր վաթսունվեց դրամ	28600 /քսանութ հազար վեց հարյուր/

		երեսուներեք լումա/	վաթսունյոթ լումա/	
40	Հեղուկ օճառ / 5լ /	60000 / վաթսուն հազար/	12000 /տասներկու հազար/	72000 /յոթանասուներկու հազար/

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում (Հավելված N 2) «Ապրանքի անվանումը» դաշտում նշված է «անվանումը» և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի 21.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում է յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ***:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Այսպես, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար տնտեսական և սանիհգենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, սահմանվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	***Ապրանքի անվանումը***	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.

«Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չ/Հ	***անվանումը***	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)/ տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով թվերով/
1	Ապակի լվանալու հեղուկ	26750 / քսանվեց հազար յոթ հարյուր հիսուն /	5350 /հինգ հազար երեք հարյուր հիսուն/	32100 /երեսուներկու հազար մեկ հարյուր/
3	Անձեռոցիկ տուփով /քաշովի/	5583.33 / հինգ հազար հինգ հարյուր ութսուներեք դրամ երեսուներեք լումա /	1116.67 /մեկ հազար մեկ հարյուր տասնվեց դրամ վաթսունյոթ լումա/	6700 /վեց հազար յոթ հարյուր/
4	Անձեռոցիկ թաց	2791.67 / երկու հազար յոթ հարյուր իննսունմեկ դրամ վաթսունյոթ լումա/	558.33 /հինգ հարյուր հիսունութ դրամ երեսուներեք լումա/	3350 /երեք հազար երեք հարյուր հիսուն/
11	Ձեռքերը չորացնելու թուղթ	2791.67 / երկու հազար յոթ հարյուր իննսունմեկ դրամ վաթսունյոթ լումա/	900 /ինը հարյուր/	5400 /հինգ հազար չորս հարյուր/
21	Զուգարանի թուղթ /երկշերտ/	66666.67 / վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/	13333.33 / տասներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/	80000 /ութսուն հազար/
31	Հոտազերծիչ	20266.67 /քսան հազար երկու հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/	4053.33 / չորս հազար հիսուներեք դրամ երեսուներեք լումա/	24320 /քսանչորս հազար երեք հարյուր քսան/
32	Մաքրող փոշի /ռախշա/	23833.33 / քսաներեք հազար ութ հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/	4766.67 /չորս հազար յոթ հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա/	28600 /քսանութ հազար վեց հարյուր/
40	Հեղուկ օճառ / 5լ /	60000 / վաթսուն հազար/	12000 /տասներկու հազար/	72000 /յոթանասուներկու հազար/

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում (Հավելված N 2) ***«Ապրանքի անվանումը» դաշտում նշված է «անվանումը» և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:***

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը հստակ սահմանում է բոլոր էական պահանջները, որոնց չպահպանման դեպքում գնման ընթացակարգի մասնակցի հայտը ենթակա է մերժման, ***մինչդեռ «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ի՝ գնային առաջարկի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ դրանում վերը նշված պայմանները չեն խախտվել, այնուամենայնիվ, անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությանը, այն է՝ «Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում (Հավելված 2) «Ապրանքի անվանումը» դաշտում նշված է «անվանումը», գտնում եմ, որ նշված անհամապատասխանությունը կրում է խիստ ձևական բնույթ, ուստի այդ հիմքով Ընկերության հայտն անբավարար գնահատելը և մերժելն իրավաչափ չէ:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սովթ պապիրուս» ՍՊԸ-ի կողմից 21.06.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղարկելու և փոփոխելու 03.06.2021թ. թիվ 2 արձանագրությամբ «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու որոշումը՝ լրացված փաստաթղթի ձևանմուշում առկա վերնագրի «անվանում» բառի մասով՝ այդ մասով կայացնելով «Սովթ պապիրուս» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**